նող տունիկայ, ծալքերը մոյգ նարնջագոյնով ստուերած, տոգան ձգել է ձախ ուսի վերայից, փաթաթել մէջքին եւ փէշերը ցած թողել ծնկների վերայից, միւս մասերով ծածկելով ազդրներն ու ծնկները. տոգայի գոյնը գորշ նարնջագոյն է, ծալքերը բաց մանուշակագոյնով ստուերած։ Ամբ ձեռքը, բռնած գրչով, շնորհալի անփութութեամբ ցած է թողել ծնկան վերայ, իսկ ձախով բռնել է ձողաւոր գրակալի վերայ բացուած իւր աւետարանը՝ բարձրանում են ողորկ բուներով և ականթի զարդերի խոյակներով սիւները, որոնց վերայ ձգուած է բեկուած կամարը, քովթարը ծածկուած արմաւենիկը յիշեցնող բուսական գրաֆիկ զարդերով, անկիւններում այս զարդերի մէջ մի մի նուրբ կազմուածքով թռչուն, դէմքերն իրար ուղղուած։ Պէտք է ասել արուեստի այս տեխնիկան հազուագիւտ է Հայոց մէջ և մահմետական, պարսկական արուեստի ազդեցութեան հետքեր պէտք է համարել։

(պատկեր 7)

«Սկիզբ աւետարանի յի. քի. / որպէս գրեալ Եսայի մարգ.» սկսուածքով։ Ոտքերի վերայ նկատելի են սանդալի կապերը։ Մօրուքը կարճ է եւ սեւ, ինչպէս եւ բեխերը, իսկ գլխի մազերը երկար և ցած իջած թիկունքից։ Քիթը, աչքերն ու յոնքերը կանոնաւոր, այտերի կեղրոնը թեթև կարմիր։ Ունի բոլորակ մեծ նիմբուս, ոսկու փոշով ծածկուած երեսը։ Մանրանկարի աջ եւ ձախ կողքերից, որպէս շրջանակ,

Գրասեղանի պահարանի մէջ դասաւորուած են անհրաժեշտ գործիքներն ու ասոթները, դանակ, մկրատ, թանաքաման, ջրամաններ։

Սկզբնազարդը 113 ա. ներքևից բաց, իրար կողքի երկու քառանկիւններ են, կողերը եռատերևի շարքով իրենց ցողուններից կազմուած բոլորակի մէջ, սրանց մէջ պարանահիւս զարդով ձողի գլխին հաստատուած է մի խաչ։ Ս և Կ սկզբնատա-